ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018 թվականի հունիսի 5 - ին տեղի ունեցավ 22 Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 10ա դասարանի ծնողական ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Ա. Հարությունյանը :

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Երկրորդ կիսամյակի արդյունքների ամփոփում:

2. Տարեկան արդյունքների ամփոփում:

3. Էքսկուրսիայի կազմակերպում:

1.Լսեցին.

Ելույթ ունեցավ դասղեկ Ա. Հարությունյանը՝ ներկայացնելով երկրորդ կիսամյակում աշակերտների ցուցաբերած արդյունքները: Նա նշեց, որ դասարանում կան բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներ, սակայն երկրորդ կիսամյակում գերազանցիկ չկա, ինչպես նաև չկա անբավարար գնահատական ունեցող աշակերտ: Դասղեկը ընդգծեց, որ աշակերտների առաջադիմության որակը առաջին կիսամյակի հետ համեմատած ավելի ցածր է, սակայն հույս հայտնեց, որ առավել շատ աշխատելու դեպքում այդ խնդիրը կհաղթահարվի աշակերտների կողմից: Շ. Հարությունյանը հորդորեց ծնողներին առավել ուշադիր լինել աշակերտների առաջադիմության հարցում:

Որոշեցին.

Ծնողները որոշեցին ավելի մեծ ուշադրություն դարձնեն, որ աշակերտները դպրոց գան դասերը տանը պատրաստած և հետևողական լինեն, որ բացթողումները լրացվեն հաջորդ տարում:

2.Լսեցին.

Դասղեկ Ա. Հարությունյանը ամփոփելով տարեկան արդյունքները՝ նշեց,որ 2017-2018 ուստարում 10 ադասարանում գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտներ չկան: Դասարանում կան 7 հարվածային աշակերտներ:Իջել է ուսման ընդհանուր առաջադիմությունը,աշակերտները կորցրել են հետաքրքրությունը դասի և գրքի հանդեպ:Չեն կարդում գեղարվեստական գրականություն: 10ա դասարանի աշակերտների առաջադիմությունը 100% է,իսկ որակական ցուցանիշը՝ 35%:Դասարանի բացակայության թիվը 28 ժամ է:Դասղեկը նշեց,որ աշակերտները

լավ վիճակում են պահպանել դասասենյակի գույքը,խնամքով են պահել դասագրքերը:Աշակերտները տարվա ընթացքում դպրոց են հաճախել պայուսակներով,օրագրերով և դպրոցական համազգեստով:

Որոշեցին.

10-ա դասարանի սովորողների տարեկան առաջադիմությունը համարել բավարար և բոլոր նպաստավոր պայմաններն ապահովել, որ նոր ուսումնական տարում աշակերտները ակտիվ մասնակցություն ունենան և հավուր պատշաճի ներկայանան դասերին:

3.Լսեցին.

Դասղեկ Ա. Հարությունյանը նշեց,որ սովորողների ուսման որակը բարձրացնելու առազմահայրենասիրական ոգով դաստիարակելու գործում մեծ դեր ունեն էքսկուրսիաները և հորդորեց ծնողներին ,որ ապահովեն աշակերտների ակտիվ մասնակցությունը դասարանում կազմակերպվող էքսկուրսիաներին:Ծնող Սարգսյան Հայարփին առաջարկեց էքսկուրսիա կազմակերպել դեպի Լոռի: Դասղեկը նշեց,որ կարելի է ընտրել Դսեղ-Քոբայր-Օձուն ուղղությունը և ծնողներին հորդորեց իրենց ակտիվ մասնակցությունը ունենալ էքսկուրսիայի կազմակերպմանը: Դասղեկ Ա.Հարությունյանը հորդորեց ընտրել առավել ապահով փոխադրամիջոց և անվտանգ իրականացնել նախատեսված էքսկուրսիան:

Որոշեցին.

Ծնողները որոշեցին էքսկուրսիայի կազմակերպման համար հավաքել որոշակի գումար ծնողկոմիտեի նախագահ Լուսինե Մովսիսյանի մոտ ,լուծել փոխադրամիջոցի հետ կապված հարցերը և իրականացնել էքսկուրսիան:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Լ. Մովսիսյան/

Քարտուղար՝ /Հասմիկ Գրիգորյան/